ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

№ 1161-Ա/Ք «20» դեկտեմբերի 2012թ.

## <<ԵՐԵՎԱՆԻ <<ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ>> ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ, ԱՌԿԱ, ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԻ ՇԱՐՔ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված N 13 հավելվածի 3-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <<Երևանի <<Մխիթար Սեբաստացի>> կրթահամալիր>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը տալ միջին մասնագիտական կրթական ծրագրով՝առկա, ուսուցմամբ, միջնակարգ և հիմնական հանրակրթության հիմքերով, համապատասխանաբար 3 և 4 տարի տևողությամբ, ըստ կուրսերի սովորողների նախատեսվող սահմանային 20-ական տեղերով՝ 0316-<<Տնային կրթություն>>, 0207-<<Թարգմանություն և գործավարություն>>, 2014-<<Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում /ըստ ճյուղերի/>>, առկա ուսուցմամբ, հիմնական հանրակրթության հիմքով, 3 տարի ուսուցման տևողությամբ, ըստ կուրսերի սովորողների նախատեսվող սահմանային 20 տեղով՝ 0313-<<Նախադպրոցական կրթություն>>, առկա ուսուցմամբ, միջնակարգ հանրակրթության հիմքով, 2 տարի ուսուցման տևողությամբ, ըստ կուրսերի սովորողների նախատեսվող

սահմանային 20-ական տեղերով՝ 0517-<<Գրադարանային գործ>>, 0206-<<Հրատարակչական գործ>>, առկա ուսուցմամբ, հիմնական և միջնակարգ հանրակրթության հիմքերով, համապատասխանաբար 3 տարի 6 ամիսև 2 տարի 6 ամիս ուսուցման տևողությամբ, ըստ կուրսերի սովորողների նախատեսվող սահմանային 20-ական տեղերով՝ 2305-<<Լուսանկարչական գործ>>, հեռակա ուսուցմամբ, միջնակարգ հանրակրթության հիմքով, 4 տարի ուսուցման տևողությամբ, ըստ կուրսերի սովորողների նախատեսվող 20-ական տեղերով՝ 0207-<<Թարգմանություն և գործավարություն>>, 2014--<<Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում /ըստ ճյուղերի/>>, 3 տարի ուսուցման տևողությամբ ըստ կուրսերի սովորողների նախատեսվող 20-ական տեղերով՝ 0517-<<Գրադարանային գործ>>, 0206-<<Հրատարակչական գործ>>, 3 տարի 6 ամիս ուսուցման տևողությամբ՝ 2305-<<Լուսանկարչական գործ>> մասնագիտությունների գծով գործունեության թույլտվություն:

2.Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ Մ. Մովսիսյանին:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Մ. Ղազարյանին:

Ա. ԱՇՈՏՅԱՆ

Կատարող*
«Երևանի Մխիթար Սեբաստացի>>
կրթահամալիր>> ՊՈԱԿ
ք. Երևան, Ա. Բաբաջանյան 25
Հայէկոնոմբանկի <Մետաքս> մ/ճ
Հ/Հ 163218137665
ՀՎՀՀ 01804186

Պատվիրատու*
ՀՀ կրթության և գիտության
նախարարություն
ք. Երևան, Կառավարական 3
Երևանի թիվ 1 գանձապետարան
Հ/Հ 900011005452

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 03-01-01/65

## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱ Ն

«_29_» « 12 » 2012թ.

Պայմանագրի անվանումը՝ **ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «05 » «11 » 2012թ. Պայմանագրի համարը՝ N ՀՀԿԳՆԾՁԲ-03-01-01/65

Պատվիրատուն՝ ի դեմս Ռ. Աբրահամյանի և Կատարողը՝ ի դեմս Ա. Բլեյանի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ « 25» «12» 2012 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) № 03-01-01/53-60 եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «01» «01» 2012թ–ից «25» «12» 2012թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը | Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| Նախնական մասնագիտական(արհեստագործական) կրթության ուսուցման ծառայություն | մ. տ. 12 | դեկտեմբեր | 1 441,0 | դեկտեմբեր |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | ------------- | ------------- | 1 441,0 | ---------- |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
(ստորագրություն)
ազգանուն Ա. Բլեյան

Աշխատանքն ընդունեց
(ստորագրություն)
ազգանուն Ռ. Աբրահամյան

ԿՏ